ԿՈՆՎԵՆՑԻԱ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները ի դեմս Կառավարությունների (այսուհետ՝ Կողմեր),

ընդունելով առաջնային ուղղություններով գիտատեխնիկական հետազոտությունների կատարման համար միավորման անհրաժեշտությունը եւ ջանքերի համակենտրոնացումը,

միջազգային գիտահետազոտական կենտրոնների եւ գիտական կազմակերպությունների ստեղծման եւ գործելու համար իրավական հիմքի ձեւավորման նպատակով,

գործելով միջազգային փորձի համապատասխան, ինչպես նաեւ միջազգային փաստաթղթերի, ՄԱԿ-ի, ՅՈՒՆԵՍԿՈ-ի, ԱՄԿ-ի երաշխավորությունների եւ Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների գիտատեխնոլոգիական ընդհանուր տարածություն ստեղծելու մասին 1995 թվականի նոյեմբերի 3-ի Համաձայնագրով, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Սույն Կոնվենցիայի նպատակների համար ստորեւ նշված հասկացությունները ունեն հետեւյալ նշանակությունները.

միջազգային գիտահետազոտական կենտրոն (այսուհետ՝ Կենտրոն)՝ միջպետական կազմակերպություն է, որը տարածքային եւ կազմակերպական հիմունքներով միավորում է Կենտրոնի անդամ պետությունների գիտնականներին եւ մասնագետներին՝ այդ պետությունների համար փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող կոնկրետ գիտահետազոտական հիմնախնդիրների ուսումնասիրության համար: Կենտրոնը գործում է միջպետական համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր), ինչպես նաեւ իր Կանոնադրության հիման վրա,

միջազգային գիտական կազմակերպություն (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ միջկառավարական կազմակերպություն, որը ստեղծված է համաձայնեցված գիտատեխնիկական քաղաքականության անցկացման, կազմակերպության անդամ պետությունների համար փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող գիտատեխնիկական համագործակցության նպատակով այդ պետությունների ազգային գիտական կազմակերպությունների առանձին առաջնային ուղղություններով գործունեության համաձայնեցման համար եւ գործում է կազմակերպության ստեղծման միջպետական համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) եւ իր Կանոնադրության հիման վրա,

գիտատեխնիկական հիմնախնդիր՝ տեսական եւ/կամ գործնական խնդիրների համախմբություն, որոնք իրենց լուծման համար պահանջում են նպատակասլաց ուսումնասիրությունների եւ մշակումների անցկացում եւ ապահովում են գիտելիքների ձեռքբերում որակապես նոր գիտական մտահղացումների իրականացման եւ մրցակցության ընդունակ տեխնիկայի նմուշների, տեխնոլոգիայի, նյութերի ստեղծումը,

գիտատեխնիկական համագործակցության առաջնային ուղղություններ՝ գիտական հետազոտությունների եւ մշակումների թեմատիկ ոլորտներ, որոնք Կողմերի սոցիալ-տնտեսական զարգացման համար ապահովում են հիմնական գիտատեխնոլոգիական ներդրումները ընթացիկ փոխադարձ օգտակար նպատակներին հասնելու համար,

գտնվելու վայր պետություն՝ պետություն, որի տարածքում գտնվում է Կենտրոնը

(Կազմակերպությունը),
Կենտրոնի (Կազմակերպության) անդամ պետություն՝ Համաձայնագրի մասնակից պետություն, որը կատարում է տվյալ Համաձայնագրի եւ Կենտրոնի (Կազմակերպության) կողմից ընդունված կանոնադրության բոլոր պարտավորությունները,
Կենտրոնի (Կազմակերպության) ասոցացված անդամ՝ պետություն, որը Կենտրոնի (Կազմակերպության) անդամ չի հանդիսանում, մասնակցում է առանձին նախագծերի մշակմանը եւ ղեկավարմանը, իրականացնում է դրանց ֆինանսավորումը, ինչպես նաեւ նյութատեխնիկական եւ կադրային ապահովումը: Կենտրոն (Կազմակերպության) ասոցացված անդամի իրավունքները եւ պարտավորությունները նշվում են Կենտրոնի (Կազմակերպության) հետ կնքված պայմանագրում,
դիտորդ՝ պետության ներկայացուցիչ, որը չի հանդիսանում Կենտրոնի (Կազմակերպության) անդամ, մասնակցում է նրա մարմինների աշխատանքին, ինչպես նաեւ մասնակցում է նրա կողմից հրավիրված խորհրդակցություններին եւ համաժողովներին,
լիազորված ներկայացուցիչ՝ Կենտրոնի (Կազմակերպության) անդամ պետության ներկայացուցիչ, որը Կենտրոնի (Կազմակերպության) բարձրագույն մարմնի կազմի մեջ նշանակվում է անդամ պետության Կենտրոնի (Կազմակերպության) կողմից, ունենալով համապատասխան լիազորություններ, գործում է իր պետության անունից,
պաշտոնական անձինք՝ Կենտրոնի (Կազմակերպության) հաստիքային աշխատակիցներ,
բացառությամբ տեխնիկական եւ սպասարկող անձնակազմի:

ՀՈԴՎԱԾ 2

ԿԵՆՏՐՈՆԻ (ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ) ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

Կենտրոնը (Կազմակերպությունը) հանդիսանում է միջազգային միջպետական կազմակերպություն, ունի միջազգային իրավազորություն, որը որոշվում է սույն Կոնվենցիայով, Համաձայնագրով եւ այլ միջազգային պայմանագրերով, որոնք կնքվել են նրա Կանոնադրության հիման վրա ի զարգացումն այդ պայմանագրերի եւ օգտվում են իրավական անձի իրավունքներից Կենտրոնի (Կազմակերպության) անդամ պետությունների տարածքներում նրանց ազգային օրենսդրության համաձայն:

ՀՈԴՎԱԾ 3

ԿԵՆՏՐՈՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Կենտրոնի հիմնական գործառույթներն են.
1. Կենտրոնի անդամ պետությունների համար փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող կոնկրետ գիտատեխնիկական հիմնախնդիրների գիտահետազոտական, նախագծակոնստրուկտորական եւ տեխնոլոգիական աշխատանքների հիմնական ուղղությունների որոշում եւ դրանց կատարման ապահովում գիտատեխնիկական ծրագրերի եւ նախագծերի ձեւով:
2. Կենտրոնի կողմից գիտահետազոտական, նախագծակոնստրուկտորական, տեխնոլոգիական աշխատանքների կատարում, ինչպես նաեւ այդ աշխատանքների կատարման կազմակերպումը, պայմանագրային (կոնտրակտային) հիմունքներով, այլ կազմակերպությունների կողմից:
3. Եզակի գիտական սարքերի եւ սարքավորումների, ինչպես նաեւ գիտական ապահովման օբյեկտների օգտագործում:
4. Կենտրոնի կողմից կատարվող աշխատանքների տեղեկատվական ապահովում,

միջպետական գիտատեխնիկական տեղեկատվության փոխանակման ապահովում, ներառյալ
ավարտված աշխատանքների գովազդը:
5. Կենտրոնի գիտատեխնիկական ուղղություններին համապատասխանող, այդ պետություններում մշակվող եւ արտադրվող արդյունաբերական արտադրանքի ստանդարտացում եւ հավաստագրում:
6. Կողմերի շուկաների պահանջարկի բավարարման եւ համաշխարհային շուկա դուրս գալու համար մասնագիտացման եւ արտադրության կոոպերացիայի կազմակերպման առաջարկությունների նախապատրաստում:
7. Գիտնականների եւ մասնագետների պատրաստում, վերապատրաստում, որակավորման
բարձրացում:
8. Կենտրոնի անդամ պետությունների գիտնականների եւ մասնագետների փոխանակման կազմակերպում:
9. Կենտրոնի գործունեության հետ կապված միջազգային գիտատեխնիկական համագործակցության իրագործում:
10. Միջազգային գիտաժողովների, համաժողովների, սեմինարների կազմակերպում եւ անցկացում:

ՀՈԴՎԱԾ 4

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Կազմակերպության հիմնական գործառույթներն են.
1. Կազմակերպության անդամ պետությունների գիտատեխնիկական համագործակցության, համաձայնագրով որոշված, ուղղությունների շրջանակներում համաձայնեցված քաղաքականության մշակում եւ այդ պետությունների տեխնիկական, ֆինանսական ներուժի եւ նյութական ռեսուրսների միավորման ճանապարհով իրականացում:
2. Համատեղ գիտահետազոտական գործունեության հիմնական ուղղությունների որոշում:
3. Համատեղ եւ/կամ համակարգված գիտահետազոտական, նախագծակոնստրուկտորական
եւ տեխնոլոգիական աշխատանքների կատարման միջոցով գիտատեխնիկական նախագծերի
համալիրի հիման վրա գիտական հետազոտությունների ծրագրերի մշակում:
4. Կազմակերպության անդամ պետությունների ազգային գիտական ներուժի զարգացման համար համաձայնեցված միջոցառումների անցկացում:
5. Աջակցություն Կազմակերպության անդամ պետություններում գոյություն ունեցող եզակի գիտական սարքերի, սարքավորումների արդյունավետ օգտագործմանը:
6. Կազմակերպության անդամ պետությունների գիտնականների եւ մասնագետների, գիտական եւ տեխնիկական տեղեկության փոխանակման համար աջակցություն:
7. Կազմակերպության գործունեության հետ կապված միջազգային գիտական համագործակցության իրականացում:
8. Միջազգային գիտաժողովների, համաժողովների, սեմինարների կազմակերպում եւ անցկացում:

ՀՈԴՎԱԾ 5

ԿԵՆՏՐՈՆԻ (ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ) ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Կենտրոնի (Կազմակերպության) վրա դրված պարտականությունների կատարման համար
Կողմերը նրան տալիս են իրավունք.

1. Ձեւավորել եւ հաստատել գիտահետազոտական եւ կազմակերպչական իր գործունեության ծրագրերը եւ բյուջեն:
2. Կենտրոնի (Կազմակերպության) անդամ պետությունների եւ այլ պետությունների պետական մարմինների, գիտական, արդյունաբերական կազմակերպությունների հետ հաստատել եւ իրագործել ուղղակի պաշտոնական եւ աշխատանքային հարաբերություններ:
3. Իր իրավասության սահմաններում, իր անունից պայմանագրեր կնքել պետական եւ միջազգային կազմակերպությունների, ինչպես նաեւ Կողմերի եւ այլ պետությունների պետական մարմինների եւ ֆիզիկական անձանց հետ:
4. Հաստատել եւ զարգացնել միջազգային կապերը:
5. Դրամական միջոցների անմիջական փոխանցում այլ երկրների կոնտրագենտներին, համատեղ եւ պայմանագրերի (կոնտրակտների) հիման վրա, պատվիրված աշխատանքների կատարման համար, այդ երկրներում սահմանված կարգի համաձայն:
6. Գույքային եւ ոչ գույքային իրավունքներ ձեռք բերել, մտավոր գործունեության (մտավոր սեփականության) արդյունքների նկատմամբ ունենալ բացառիկ իրավունք, տիրել, օգտվել եւ տնօրինել սեփական անշարժ եւ շարժական գույքը, դատարաններում հանդես գալ որպես հայցվոր եւ պատասխանող:
7. Բանկային հաշիվներ բացել ցանկացած արժույթով:
8. Կենտրոնի (Կազմակերպության) անդամ պետությունների միջեւ իրականացնել գիտական, տեխնիկական եւ տնտեսական տեղեկատվության փոխանակում:
9. Կենտրոնի (Կազմակերպության) անդամ պետությունների միջեւ իրականացնել գիտնականների եւ մասնագետների փոխանակում:
10. Կենտրոնի (Կազմակերպության) անդամ պետությունների տարածքում հրատարակել եւ տարածել այդ պետությունների օրենսդրությանը համապատասխանող իր պաշտոնական տպագրական հրատարակությունները, որոնց հրատարակումը նախատեսված է Կենտրոնի (Կազմակերպության) հիմնադիր փաստաթղթերով կամ էլ նրա բարձրադիր մարմնի որոշումներով:
11. Կենտրոնի (Կազմակերպության) անդամ պետությունների համար փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող գիտական եւ գիտատեխնիկական ուղղություններով կատարել գիտնականների եւ մասնագետների պատրաստում, վերապատրաստում եւ որակավորման բարձրացում:
12. Ստեղծել Կենտրոնի (Կազմակերպության) բաժանմունքներ եւ ներկայացուցչություններ:

ՀՈԴՎԱԾ 6

ԿԵՆՏՐՈՆԻ (ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ) ՍՏԵՂԾՈՒՄԸ

1. Կենտրոնը (Կազմակերպությունը) հիմնադրվում է շահագրգռված պետությունների կողմից Համաձայնագրի կնքման միջոցով:
2. Կենտրոնի (Կազմակերպության) հիմնադրման առաջարկությունը նախապատրաստվում է շահագրգիռ պետությունների նախաձեռնությամբ, գիտատեխնիկական զարգացման Միջպետական կոմիտեի կողմից (այսուհետ՝ ԳՏԶ ՄՊԿ): Համաձայնության նախագիծը, Կենտրոնի (Կազմակերպության) կանոնադրությունը եւ այլ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվում են Տնտեսական միության Միջպետական Տնտեսական Կոմիտեին քննարկման համար, որից հետո ներկայացվում են ԱՊՀ Կառավարությունների ղեկավարների Խորհրդի քննարկմանը:
3. Կենտրոնի (Կազմակերպության) Համաձայնագրի եւ Կանոնադրության մեջ որոշվում են Կենտրոնի (Կազմակերպության) ստեղծման նպատակները, նրա խնդիրները եւ գործառույթները, իրավական կարգավիճակը, գիտահետազոտական

ուսումնասիրությունների, նախագծակոնստրուկտորական, տեխնոլոգիական աշխատանքների
հիմնական ուղղությունները, նրա գործունեության ֆինանսավորման պայմանները եւ կարգը, գիտական եւ տնտեսական գործունեության պայմանները, Կենտրոնի (Կազմակերպության) մարմինները, արտոնությունները, առավելությունները եւ անձեռնմխելիությունը, որոնք տրվում են Կենտրոնին (Կազմակերպությանը), իրավասու ներկայացուցիչներին եւ պաշտոնական անձանց, Կենտրոնի (Կազմակերպության) գույքային եւ ոչ գույքային իրավունքները, որոշումների ընդունման կարգը, Կենտրոնի (Կազմակերպության) լուծարման կարգը, ինչպես նաեւ այլ հարցեր, որոնք անհրաժեշտ են Կենտրոնի (Կազմակերպության) արդյունավետ գործունեության համար:

Համաձայնագիրը պետք է գրանցվի Միավորված ազգերի Կազմակերպության Քարտուղարությունում:

4. Կենտրոնը, որպես կանոն, կազմակերպվում է ազգային գիտական կենտրոնների (կամ էլ նրանց մասնաճյուղերի) հիման վրա, որոնք համաշխարհային գիտության մեջ գրավում են առաջնային դիրքեր եւ/կամ ունեն սարքերի եւ սարքավորումների եզակի համակազմ:

5. Կենտրոնը (Կազմակերպությունը) իր գործունեությունը կատարում է սույն Կոնվենցիայի, Համաձայնագրի եւ այլ միջազգային պայմանագրերի եւ Կանոնադրությանը համապատասխան:

6. Կենտրոնը (Կազմակերպությունը), յուրաքանչյուր պետության հետ, համաձայնագիր է կնքում տվյալ երկրում գտնվելու պայմանների վերաբերյալ:

ՀՈԴՎԱԾ 7

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

1. Կենտրոնի (Կազմակերպության) գործունեության ֆինանսավորումը կատարվում է Համաձայնագրով եւ Կանոնադրությամբ նախատեսված աղբյուրների միջոցով:

Ֆինանսավորումը կարող է իրականացվել ի հաշիվ՝

Կենտրոնի (Կազմակերպության) անդամ պետությունների մասնային եւ միանվագ նպատակային մուծումների,

նրան բացառիկ իրավունքով (մտավոր սեփականության) պատկանող իրականացումից ստացված շահույթի,

պետությունների, իրավաբանական եւ ֆիզիկական անձանց կողմից կատարվող կամավոր մուծումների եւ նվիրատվությունների,

Կենտրոնի (Կազմակերպության) Համաձայնագրով եւ Կանոնադրությամբ նախատեսված
այլ աղբյուրների:

2. Կենտրոնի (Կազմակերպության) գործունեության ընթացքում ստեղծված եւ ձեռք բերված գույքը հանդիսանում է նրա սեփականությունը:

3. Կենտրոնի (Կազմակերպության) լուծարման դեպքում յուրաքանչյուր պետություն իրավունք ունի ստանալ միջոցների եւ ունեցվածքի իր բաժինը:

ՀՈԴՎԱԾ 8

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

1. Կենտրոնը (Կազմակերպությունը) իր կողմից ինքնուրույն, ինչպես նաեւ պատվիրված ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ պայմանագրերում (կոնտրակտներում), այլ որոշումների բացակայության դեպքում, բացառիկ իրավունք ունի:

2. Կենտրոնի (Կազմակերպության) անդամ պետությունները իրավունք ունեն ոչ առեւտրային նպատակներով օգտագործել գիտահետազոտական, փորձակոնստրուկտորական եւ

տեխնոլոգիական աշխատանքների արդյունքները:

ՀՈԴՎԱԾ 9

ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

1. Կողմերը Կենտրոնի (Կազմակերպության) լիազոր ներկայացուցիչներին, պաշտոնատար անձանց կարգավիճակի եւ կանոնադրական խնդիրների համաձայն, համապատասխան գործունեության համար, առավելությունների, արտոնությունների եւ անձեռնմխելիության իրավունք են տալիս: Կոնկրետ առավելությունները, արտոնությունները եւ անձեռնմխելիությունը որոշվում են պայմանագրով, որը կնքվում է Կենտրոնի (Կազմակերպության) եւ այլ պետության հետ, որի տարածքում է նա գտնվում:

Ընդ որում, առավելությունները, արտոնությունները եւ անձեռնմխելիությունը Կենտրոնի (Կազմակերպության) գտնվելու պետության տարածքում տարածվում են այդ պետության քաղաքացիություն չունեցող (կամ էլ մշտական չբնակվող) անձանց վրա:

2. Արտոնությունները եւ անձեռնմխելիությունը Կենտրոնին (Կազմակերպությանը), լիազորված ներկայացուցիչներին, պաշտոնատար անձանց տրվում են ոչ թե անձնական շահի, այլ Կենտրոնի (Կազմակերպության) աշխատանքների հետ կապված իրենց գործառույթները անկախ եւ արդյունավետ կատարելու համար:

ՀՈԴՎԱԾ 10

ԿԵՆՏՐՈՆԻ (ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ) ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՄԻՆԸ

1. Բարձրագույն մարմին է հանդիսանում՝

Կենտրոնի համար՝ Կենտրոնի անդամ պետությունների լիազոր ներկայացուցիչների Խորհուրդը,

Կազմակերպության համար՝ Կազմակերպության անդամ պետությունների լիազոր ներկայացուցիչների Կոմիտեն:

Լիազոր ներկայացուցիչները նշանակվում են Համաձայնագրի ստորագրման ժամանակ:

Բարձրագույն մարմնի աշխատանքներին կարող են մասնակցել Կենտրոնի (Կազմակերպության) ասոցացված անդամների կողմից լիազորված ներկայացուցիչները, ինչպես նաեւ դիտորդները:

2. Բարձրագույն մարմինը հաստատում է Կենտրոնի (Կազմակերպության) բյուջեն եւ նրա կատարման հաշվետվությունը: Ձեւավորում է Կենտրոնի (Կազմակերպության) գործադիր, գիտական, խորհրդակցական եւ ֆինանսավերահսկողական մարմինները:

3. Բարձրագույն մարմինը հաստատում է Կենտրոնի (Կազմակերպության) գիտահետազոտական եւ կազմակերպչական գործունեության ծրագիրը:

4. Բարձրագույն մարմնի որոշումները Կենտրոնի (Կազմակերպության) գործունեությանը մասնակցող բոլոր կազմակերպությունների համար պարտադիր բնույթ են կրում:

ՀՈԴՎԱԾ 11

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն Կոնվենցիան չի շոշափում այլ միջազգային պայմանագրերի դրույթները, որոնց մասնակիցներն են հանդիսանում Կողմերը:

2. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այն ստորագրած Կողմերի կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին
երրորդ ծանուցումը ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:

Անհրաժեշտ ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար այն ուժի մեջ է

մտնում համապատասխան փաստաթղթերը ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:

3. Սույն Կոնվենցիայում Կողմերի ընդհանուր համաձայնությամբ կարող են փոփոխություններ եւ լրացումներ կատարվել: Փոփոխությունները եւ լրացումները ձեւակերպվում են առանձին արձանագրություններով:

4. Սույն Կոնվենցիայի կիրառման եւ մեկնաբանման հետ կապված վիճելի հարցերը լուծվում են շահագրգիռ Կողմերի միջեւ խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով:

Վիճելի հարցերը բանակցությունների միջոցով լուծելու անհնարինության դեպքում Կողմերը դիմում են Անկախ Պետությունների Համագործակցության Տնտեսական դատարան կամ այլ իրավասու միջազգային դատական մարմիններ:

5. Սույն Համաձայնագիրը գործում է ուժի մեջ մտնելու օրվանից 5 տարվա ընթացքում: Այդ ժամկետը լրանալուց հետո Համաձայնագիրը ինքնաբերաբար կերկարաձգվի ամեն անգամ 5 տարով, եթե Կողմերը այլ որոշում չկայացնեն:

6. Յուրաքանչյուր Կողմ կարող դուրս գալ սույն Կոնվենցիայից՝ այդ մասին դուրս գալուց առնվազն վեց ամիս առաջ գրավոր ծանուցում ուղարկելով ավանդապահին:

7. Սույն Կոնվենցիան բաց է նրա նպատակները եւ սկզբունքները կիսող այլ պետությունների կողմից միանալու համար՝ այդպիսի միացման մասին փաստաթղթերը ավանդապահին հանձնելու միջոցով:

Կատարված է Մոսկվա քաղաքում 1998 թվականի նոյեմբերի 25-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր քարտուղարությունում, որը սույն Կոնվենցիան ստորագրած յուրաքանչյուր պետության կուղարկի դրա հաստատված պատճենը:

* Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2000 թվականի փետրվարի 24-ից: